

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	ՊՏՂՈՒՆՔ
ՄԱՐԶ	ԱՐՄԱՎԻՐ



1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

1880 թվականին Ղարաբաղից եկած մեծահարուստ Ներսես Աթաբեկյանը դիմում է Կովկասի փոխարքային՝ խնդրելով իրեն հող տրամադրել՝ գյուղատնտեսությամբ զբաղվելու համար: 1885թ. հոկտեմբերի 24-ին Ցարական Ռուսաստանի սենատը իր հրամանով Երևանի նահանգում գտնվող Նասիրապատ կոչվող դռերի զգալի մասը՝ ավելի քան 517 դեսյատին, առհավետ և ժառանգաբար տիրելու իրավունքով տրվեց Ներսես Աթաբեկյանին, որը հետագայում կոչվեց Ներսեսապատ՝ ապա Շադրլու: 1913թ. Աթաբեկյանը տարածքը կապալով տվեց Փարաքարի հայտնի կուլակ Տիգրան Տեր-Մաթևոսյանին, որի տնօրինության ընթացքում նշված տարածքում գտնվող բամբակի և բրնձի դաշտերը հիմնովին շարքից դուրս եկան: 1920թվականի դեկտեմբերի 28-ի դեկրետով ազգայնացվեցին բոլոր կալվածատիրական հողերը: Իսկ 1921 թվականի հունվարի 29-ին որոշվեց նշված տարածքներում հիմնել սովետական տնտեսություններ: Պտղունք համայնքը՝ իր ներկայիս վարչական տարածքով հիմնադրվել է 1926 թվականին՝ որպես 3-րդ սովխոզին կից պտղաբուծական բրիգադա, որը ուներ 230 հեկտար պտղատու և 11 հեկտար խաղողի այգի, որի բերքատվությունը խիստ ցածր էր: 1931 թվականին նորաստեղծ 9-րդ սովխոզի դիրեկտոր է նշանակվում հայտնի կուսակցական և քաղաքական գործիչ և անվանի գյուղատնտես Ավագ Ավագյանը: Կազմավորումից հետո , չունենալով բավարար աշխատուժ, 9-րդ սովխոզի ղեկավարությունը դիմում է Էջմիածնում տեղակայված զինվորական գնդի հրամանատար Հովհաննես Բաղրամյանին՝ օգնության խնդրանքով: Ցուցաբերվում է մեծ օգնություն. տեղանքի խամ ու խոպան հողատարածքները մաքրվում են քարերից և հարթեցվում, կատարվում են տասնյակ հեկտարների ծիրանի և այլ մրգատու ծառերի տնկարք: 1945 թվականի հունվարի 1-ից վերադաս օրգանների որոշմամբ 3-րդ սովխոզից անջատվեց պտղաբուծական բաժանմունքը կոչվեց Բաղրամյանի անվան սովխոզ:

Մեր համայնքի բնակիչներն ակտիվորեն մասնակցել են 2-րդ համաշխարհային պատերազմին: Հայրենական պատերազմի ռազմաճակատում թշնամու դեմ խիզախությամբ կռվել են Պանդուխտ Ներսիսյանը, Կարո Չոբանյանը, Սահակ Սահակյան, Հմայակ Ստեփանյան, Սուրեն Հարությունյան, Արամայիս Գրիգորյան, Սարգիս Խաչատրյան, Բարսեղ Աղաջանյան, Դանիել Հակոբյան, Սուրեն Հարությունյան, Տիգրան Հարությունյան , Վալդդոյա Օհանյան, Արմենակ Եսայան:

1946-1947 թթ. տնտեսության աշխատուժը համալրվեց Պարսկաստանից, Հունաստանից, Ֆրանսիայից, Մուսալեռից եկած հայրենադարձներով: 1957 թվականի ՀՍՄՌ Գերագույն Սովետի հրամանագրով Բաղրամյանի անվան սովխոզը կոչվեց Պտղունք: 1962 թվականին 3-րդ և 9-րդ սովխոզները միավորվեցին:

1949-1976թթ. սովխոզի ղիբեկտորն է եղել Սարգիս Թորգոմի Սարգսյանը:

1976-1988թթ. սովխոզի ղեկավարն է եղել Հենրիկ Նահապետի Համբարձումյանը:

1988-1991թթ. սովխոզի վերջին նախագահն է եղել Անդրանիկ Ալմաստի Արթենյանը:

Պտղունք համայնքից միավորված սովխոզում եղել են բազմաթիվ բրիգադիիրներ, որոնք իրենց աշխատանքով նպաստել են գյուղատնտեսության զարգացմանը:

Նրանցից են.

Անդրանիկ Արթենյանը, Աղասի Սարգսի Արթենյանը, Շիրիսան Սարգսի Արթենյանը, Անդրանիկ Ալմաստի Արթենյանը, Գալուստ Պապանի Մաթևոսյանը, Բալաբեկ Մարտիրոսյանը և այլն:

1991թվականին Հայաստանի անկախացումից հետո սովխոզը տրոհվեց Մուսալեռ և Պտղունք համայնքների:

1991-2002 թթ. Պտղունք համայնքը ղեկավարել է Վարդան Մկրտչի Ազիզյանը:

2002-2012 թթ. համայնքի ղեկավար է եղել Սամվել Սամսոնի Զեյնալյանը:

2012թ. առ այսօր համայնքի ղեկավարն է Կարապետ Արշավիրի Արթենյանը:

Պտղունք համայնքի զավակները ակտիվորեն մասնակցել են Արցախյան ազատամարտին ինչպես անհատապես, այնպես էլ Տիգրան Մեծ կամավորական ջոկատի կազմում: Համայնքի ազատամարտիկներն են.

Անդրանիկ Պեպխյան, Համայակ Ավետիսյան, Վոլոդյա Ավետիսյան, Վահան Մարգարյան, Մանվել Չաքմանյան, Ժոզեֆ Քեսաբյան, Անդրանիկ Շմոյան, Նելսիկ Թանգամյան, վանիկ Սաղաթեյան, Ռաֆիկ Հովհաննիսյան, Վարդան Մաթևոսյան, Հարազատ Մարգարյան: Նրանցից Մանվել Չաքմանյանը և Անդրանիկ Շմոյանը իրենց կյանքը զոհեցին հանուն հայրենիքի:

1998 թվականին Պտղունք համայնքում կանգնեցվեց խաչքար-հուշարձան՝ նվիրված Արցախյան ազատամարտին մասնակցած և զոհված ազատամարտիներին:

Պտղունք համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց և մեկ մանկապարտեզ: Մանկապարտեզը գործում է 90-ական թվականներից, նրա անփոխարինելի տնօրենն է Ռոզիկ Քերոբի Խաչատրյանը: 1999 թվականին ամերիկահայ բարերարներ Սեդա և Զոհրապ Ղազարյանների աջակցությամբ մանկապարտեզն ամբողջությամբ վերանորոգվեց, ձեռք բերվեց

համապատասխան գույք և տեխնիկա,անցկացվեց լոկալ ջեռուցման համակարգ,և մինչև այժմ մանկապարտեզը կլոր տարի գործում է 2 խմբով և նորմալ աշխատանքնային ռեժիմով:

Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոցը կառուցվել է 1940-ականների վերջին: Վերջին անգամ վերանորոգվել է 35 տարի առաջ: Ներկայումս գտնվում է խիստ անմխիթար և վթարային վիճակում :

Ներկայումս Պտղունք համայնքը ամբողջովին ապահովված է խմելու ջրով, ամբողջովին գազաֆիկացված է, գյուղի 90 տոկոսը ապահովված է փողոցային լուսավորության համակարգով,որից Երևան-Էջմիածին խճուղին` ամբողջությամբ:

Բարերարների նախաձեռնությամբ համայնքում կառուցվել և գործում է Արմենիան Լայթ Հաուս բարեգործական հիմնադրամը, որը ապաստան է բռնության զոհ դարձած միայնակ և անապահով կանանց ու երեխաների համար:

Համայնքում կա բուժկետ:Ինչպես նաև համայնքն ունի փոստային բաժանմունք:

Համայնքի բնակիչները զբաղվում են անասնապահությամբ, մեղվապահությամբ, խաղողագործությամբ, պտղաբուծությամբ,արտագնա աշխատանքով: Մայրաքաղաքին շատ մոտ գտնվելու պատճառով բնակիչների մի մասն աշխատում է Երևանում:

Պտղունք համայնքից են ժողովրդական երգիչ ՀՀ վաստակավոր գործիչ Գևորգ Չաքմանյանը, ինչպես նաև օպերային երգչուհի Թեհմինե Եղիազարյանը, ով երգում է Միլանի, Պետերբուրգի,Վիեննայի և այլ հայտնի բեմերում:

Պտղունք համայնքի վարչական տարածքը սահմանակից է Մուսալեռ, Արևաշատ, Զվարթնոց, Բաղրամյան և Նորակերտ համայնքներին: Համայնքով անցնում է միջպետական նշանակություն ունեցող Երևան-Էջմիածին խճուղին, որի երկարությունը համայնքի տարածքում կազմում է 1.5 կմ:

Ներկայումս համայնքն ունի 2100 բնակիչ, որից 20-ը Սիրիայից ներգաղթյալներ են: Համայնքում ապրում են 240 դպրոցահասակ երեխաներ, սակայն դպրոցի անմխիթար լինելու պատճառով տեղի միջնակարգ դպրոց են հաճախում միայն 140 աշակերտներ: մանկապարտեզում կան 65 սաներ: Իսկ համայնքից ամեն օր տարբեր համալսարաններ են գնում մոտ 50 ուսանողներ: Այժմ համայնքի վարչական տարածքը կազմում է 426 հա և և գտնվում է ծովի մակերևույթից

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (°C)	
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (°C)	

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից	1.1) ՊՏՂՈՒՆՔ
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	9-րդ սովխոզ
3. Համայնքի հեռավորությունը՝	
3.1) մայրաքաղաքից (կմ)	12 կմ
3.2) մարզկենտրոնից (կմ)	35 կմ
3.3) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	30 կմ
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	7 կմ
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	0 կմ
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	15 կմ
4. Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	850 մ
5. Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	0,424 կմ/հա
6. Սահմանակից համայնքների անվանումները	Մուսալեռ, Արևաշատ, Էջմիածին, Նորակերտ, Բաղրամյան
7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	Ptghunq1@mail.ru ptghunq.armavir@mta.gov.am
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	ptghunq.am
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	+37493351105
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	+37493133833
11. Համայնքի հեռախոսային կոդը	0231
12. Համանքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	այո
13. Համայնքապետարանի փոստային դասիչը	1145
14. Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	ոչ
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	այո

5. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2018թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	2106
2. Գրանցված ծնունդների քանակը	27
2. Մահացության դեպքերի քանակը	11
3. Ամուսնությունների քանակը	6

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

4. Ամուսնալուծությունների քանակը	1
5. Տնային տնտեսությունների թիվը	400
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	23
7. Կենսաթոշակառուների քանակը	198
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	48

6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2018թ.
1. Գրադարանների քանակը	0
2. Արվեստի դպրոցների քանակը	0
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	1
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	0

7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	2018թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ ²)	9600
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	1
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	390

8. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	2018թ.
1. Հողեր, ընդամենը (հա)	426.69
2. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	283.14
3. Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	121.97
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	199
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	400
7. Խոզերի գլուխաքանակը	265
8. Գյուղատնտեսական տեխնիկա	1
8.1 տրակտորներ (քանակը)	1
8.2 կոմբայններ (քանակը)	-
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	386

9. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1.Էլեկտրական ենթակայանների քանակը	5
2.Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3.Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	ոչ
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	13կմ
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	3
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	6
6.2 Էքսկավատորների քանակը	-
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	-
6.4 Գրեյդերների քանակը	-
6.5 քանակը	-
6.6 Աղբատար մեքենաների քանակը	-
6.7Բազմաֆունկցիոնալ կոմունալմեքենաների քանակը	-
6.8Վակումային փոշեկուլմեքենաներիքանակը	-
6.9Ավտոաշտարակների քանակը	-
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	1,5
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

10.ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1.Ընդամենը եկամուտներ	44936,5	51208,8
2. Հարկային եկամուտներ, ընդամենը Այդ թվում՝	13300,0	17081,5
2.1 հողի հարկ	5800,0	5647,7
2.2 գույքահարկ	7500,0	11433,8
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	28736,5	28736,5
3.1 դոտացիա	28736,5	28736,5
3.2 սուբվենցիա	-	-
4.Մուտքեր հողի օտարումից	-	1790,6

Համայնքի վարչական բյուջեի ծախսեր(հազ. դրամ)

	Ընդունված	Փաստացի
--	-----------	---------

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

	բյուջե	
1. Ընդամենը ծախսեր	46336,5	40003,5

Համայնքի ֆոնդային բյուջերի եկամուտները(հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	10184,1	10184,1

Ֆոնդային բյուջեի ծախսեր(հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	10184,1	9852,1

11.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿՈՒՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1.Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ որից՝	8
1.1 համայնքային ծառայողներ	5
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	15318,1
3. Ավագանու անդամների թվաքանակը	6

12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը	Ակնկալվող լուծումը
Միջնակարգ դպրոցի անմխիթար վիճակ	Ասիական բանկի ծրագրով նոր դպրոցի կառուցում
Բազմաբնակարան շենքի տանիք	Հրատապ ծրագրերով համայնքի մասնակցությամբ տանիքի վերանորոգում
Փողոցների ասֆալտապատում	Համայնքի ուժերով մասնակի երկրորդական ասֆալտապատում
Երևան-Էջմիածին խճուղու ջրահեռացման հարցը	Կապի և տրանսպորտի նախարարության հետ համատեղ խնդրի լուծում